երանի յիշատակ զնողաց տվաք· եւ ասին թէ
ԽՌ Ֆլորի կու հայի: Այլ կայր առջեւ խո-
րանին չորս սիւն ազնիւ սփետրէ, զոր ոմանք
ասին ոսկէջրած է: Եւ կայր խորանին վրայ
զուտր արծթէ թափած երկոտասան առա- 40
քեալս մեծամեծ եւ այլ սուրբք: Եւ ո՞ր բե-
րան կարէ պատմել կամ գին դնել:

Եւ ի մէջ մատուռի մի տեսաք ճիաւոր
մի, որ ասին թէ Կոստանդիանոսն է, թագ ի
գլուխն եւ ի ձեռն պօղտօղան: Եւ էին ժամն 45
այն վաթսուն մեծամեծ սիւնք մարմարիոնէ·
թող զփոքրկունս, եւ զայլ չինուածս հիանա-
լիս· զի կարծես թէ մատամբն Աստուծոյ է
չինած: Եւ ի մէջ տաճարին յաջ կողմն տեսաք
եօթն ոսկի խնծոր յառաստաղն ծիրանէգոյն· 50
եւ ասին թէ զսա կոչէ տաճիկն՝ խզբլալմայ:

ԱՆԹԱ ՄԱՃՕՐԻ

Եւ մերձ նմին կայր մեծ եւ փառաւոր
եկեղեցի մի Սանթա Մաճօր, որ է Զոյ Աս-
տուածածին· ունէր իրեք զմպէթ եւ կայր
անդ յայն անէն, ուր զՔրիստոս կապեցին՝ 55
երկաթով կապած եւ ծակ թողած· ուր գնա-
ցեալ զաչվիս եւ զերեսվիս չփեցաք, այլ եւ
զդէսպէհնիս: Եւ աւագ խորնին երկու կողմն
մատուռք կային, որ ասին թէ անդ բազում
սրբոց նշխարք կան· այլ եւ մասն Մարկոս 60
աւետարանչին· որոց լիցի իմ երեսս մո-

61 յորոց... յերեսս: